


Երաժշտության դերը սովորողների գեղագիտական զգացմունքների ձևավորման գործում

Մինոնյան Լալա Մ.

Ասպիրանտ, Մանկավարժության ամբիոն, Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0007-2742-1648>

simonyanlala-phd24@aspu.am

ՀՏԳ՝ 78.06; **EDN:** RYCVTX

DOI: 10.58587/18292437-2025.2-162

Հանգուցաբառեր և բառակապակցություններ. Գեղագիտական զգացմունք, գեղագիտական դաստիարակություն, գեղագիտական ընկալում, դպրոց, երաժշտություն, ստեղծագործական մտածողություն, խաղ, երգեցողություն, համակողմանի զարգացում, արվեստ, հույզեր

Роль музыки в формировании эстетических чувств учащихся

Симонян Лала М.

Аспирант кафедры педагогики,

Ереванский государственный педагогический университет им. Хачатуря Абовяна (Ереван, РА)

Аннотация. В статье рассматривается формирование эстетических чувств учащихся общеобразовательных школ посредством музыки. Дана общая характеристика эстетических чувств, рассмотрены вопросы эстетического воспитания учащихся. Затем подробно описывается роль музыки в гармоничном развитии учащихся, их эстетическом восприятии, формировании эмоций. В конце статьи предлагается несколько игровых упражнений для использования в процессе обучения музыке, которые могут быть применимы учителям, преподающим этот предмет.

Ключевые слова и фразы: Эстетическое чувство, эстетическое воспитание, эстетическое восприятие, школа, музыка, творческое мышление, игра, пение, всестороннее развитие, искусство, эмоции

The Role of Music in the Formation of Students' Aesthetic Feelings

Simonyan Lala M.

Postgraduate Student, Department of Pedagogy,

Yerevan Khachatur Abovyan Armenian State Pedagogical University (Yerevan, RA)

Abstract. This article concerns the formation of students' aesthetic feelings in general schools through music. The general characteristics of aesthetic feelings are presented, and the issues of students' aesthetic education are discussed. Then the role of music in the harmonious development of students, their aesthetic perception and the formation of feelings is described in detail. At the end of the article, several game exercises are proposed to be used in the process of teaching Music, which can be applicable for teachers teaching the subject.

Keywords and phrases: Aesthetic feeling, aesthetic education, aesthetic perception, school, music, creative thinking, play, singing, comprehensive development, art, emotions

Ներածություն

Գեղագիտական զգացմունքը մարդու բարձրագույն զգացմունքների տեսակներից է, ինչպես ինտելեկտուալ և բարոյական զգացմունքները: Տարբեր հետազոտություններում կարելի է տեսնել գեղագիտական զգացմունքների մի շարք սահմանումներ: Օրինակ՝ շատ հաճախ այն հանդես է գալիս որպես մարդու կողմից գեղեցիկի ապրում, որը մարդն ունենում է երևույթների կամ մարդկանց գեղագիտական և հակագեղագիտական կողմերն ընկալելիս: Գեղագիտական զգացմունքն առաջանում և զարգանում է մարդու կողմից լավագույնի

ընդունմամբ և ստեղծմամբ: Գեղեցիկը մարդուն գրավում է մեծ չափով, ուստի ինչքան մարդն ավելի խորն է մտնում գեղեցիկի աշխարհը, այնքան շատ է այն հասկանում և ընկալում, հետևաբար սկսում է տարբերել գեղեցիկը սգեղից, կոմիկականը ողբերգականից և այլն:

Գեղագիտական զգացմունքները սերտորեն կապված են գեղագիտական ընկալումների, գեղագիտական գնահատումների և գեղագիտական ճաշակի հետ: Իսկ այս ամբողջ համալիրը, ինչպես գիտենք, ընդգրկված է գեղագիտական դաստիարակության մեջ: Մեզանից պահանջվում է միայն գտնել համապատասխան մեթոդներ,

միջոցներ և ուղիներ, որոնք կօգնեն ճիշտ կազմակերպել այսօրվա իրականության մեջ ապրող և ստեղծագործող անհատների գեղագիտական դաստիարակությունը:

Ուսումնասիրություն

Ինչպես գիտենք անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնահարցը եղել ու մնում է մանկավարժության կարևոր խնդիրներից մեկը: Համակողմանի ու ներդաշնակ անձնավորություն դաստիարակելու համար ամենից առաջ նրա մեջ պետք է զարգացնել փոխկապակցված մարդկային բարձրակարգ զգացմունքներ:

Գեղագիտական զգացմունքների ձևավորման հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի և կենցաղի գեղագիտական կողմերի հետ, իսկ ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկության պահանջմունքի զարգացմանը:

Գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, գնահատելու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ի վերուստ: Սակայն դրանց ձևավորման և զարգացման վրա մեծապես ազդում են մշակույթը, սոցիալական միջավայրը, ընտանեկան պայմանները և այլն: Ինչպես հայտնի է, անհատի զարգացման գործում մեծ են նաև կրթական օղակների դերը սկսած նախադպրոցական ուսումնական հաստատություններից: Շատ կարևոր է, թե ինչպես են դրվում այն հիմքերը, որոնք պատասխանատու են երեխայի հետագա ողջ կյանքի համար:

Մեծ նշանակություն ունի կրթական հաստատություններում գեղագիտական դաստիարակության կազմակերպման դերը, որը մյուս բոլոր դաստիարակության տեսակների հետ անձի համակողմանի զարգացման մի մասն է կազմում և շատ կարևոր է դրանց ընդհանուր կապը: Մ. Ս. Մելքունյանն իր «Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը» գրքում անդրադառնում է սովորողների գեղագիտական զգացմունքների ձևավորման խնդիրներին և առաջարկել մի շարք լուծումներ: Գրքում հեղինակը կարևորում է հանրակրթական դպրոցի դերը աշակերտների գեղագիտական առողջ զգացմունքների դաստիարակության գործում: Այս հարցին դեռ վաղուց բազմաթիվ հետազոտողներ են անդրադարձել, դպրոցը համարելով այն կարևոր օղակներից մեկը, որի վրա մեծ պատասխանատվություն է դրված զբաղվելու սովորողների գեղագիտական դաստիարակությամբ: Լ. Ս. Ներսիսյանն իր «Կրթություն և

գեղագիտություն» գրքում անդրադառնում է այս հարցին, կարևորելով գեղագիտական դաստիարակության ճիշտ դրվածքը դպրոցականի ներդաշնակ զարգացման համար:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում գեղագիտական դաստիարակությունը պետք է ներառված լինի բոլոր ուսումնական առարկաների դասավանդման գործընթացում, քանի որ, ինչպես ցույց են տալիս կատարված ուսումնասիրությունները, բոլոր առարկաները պարունակում են գեղագիտական տարր, որը գտնել և զարգացնել է պետք ուսուցման գործընթացում: Եվ ընդհանրապես, գեղագիտական զգացմունքների դաստիարակության ուղիներն ու միջոցները տարբեր են. բնություն, ընտանիք, հասարակական կյանք, կենցաղ, կրթական հաստատություններ, հանրակրթական դպրոցներում՝ ուսումնական բոլոր առարկաները, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները և այլն:

Սովորողների մոտ գեղագիտական պատկերացումների, ըմբռնումների ու ճաշակի ձևավորումը բավական բարդ խնդիր է: Արվեստի միջոցով երեխայի գեղագիտական դաստիարակության և հատկապես զգացմունքների ձևավորման գործընթացը ունակ է լիովին լուծելու այս խնդիրները, քանի որ այն կրում է իր մեջ մարդկային զգացմունքների մի ամբողջ աշխարհ: Լ. Ս. Ներսիսյանն իր «Կրթություն և գեղագիտություն» գրքում նշում է. «Արվեստը հանդիսանում է մարդու առավել խոստոված գեղագիտական վերաբերմունք առ իրականություն, և այդ պատճառով առաջատար դեր է կատարում գեղագիտական դաստիարակության մեջ» [5, էջ 14]: Այնուհետև նշում է, որ արվեստը մեծ դեր ունի հասարակության հոգևոր կյանքում, առաջին հերթին ելնելով իրեն հատուկ բազմագործառնականությունից, համադրությունից, ինչպես գեղագիտական, այնպես էլ արտագեղագիտական գործառույթները գույակցելուց [5, էջ 18]:

Արվեստը ոչ միայն զարգացնում է ստեղծագործական կարողություններ, այլև նպաստում է համաշխարհային և համամարդկային արժեքների ընկալման խորացմանը: Արվեստը կարող է լինել այն միջոցը, որը օգնում է սովորողներին բացահայտելու և հասկանալու իրենց ներքին աշխարհը, հույզերն ու մտքերը: Այն սովորողներին տալիս է հնարավորություն ավելի խորը կապ հաստատելու իրենց շրջապատի հետ և հասկանալու մարդկային փորձը:

Բազմաթիվ անվանի երաժիշտ-մանկավարժներ երաժշտությունը համարում են անփոխարինելի միջոց՝ ընդգծելով երաժշտության դերը անհատի գեղագիտական զարգացման գործում: Այն առաջին հերթին ճանապարհ է դեպի մարդկային զգացմունքների հսկայական աշխարհը հասկանալու: Այն իր հուզական լեզվի

օգնությամբ ազդում է զգացմունքների վրա, ազդում մարդու աշխարհայացքի վրա, առաջնորդում և փոխում է նրան: Երաժշտությունն իդեալական միջոց է երեխայի զգացմունքները հարստացնելու և ներդաշնակեցնելու համար: Չէ՞ որ երաժշտությունը կիրառվում է նաև բուժական նպատակներով, որը հայտնի է երաժշտաթերապիա անունով:

Երաժշտական դաստիարակությունը և երաժշտական գործունեությունը գեղագիտական դաստիարակության առանցքային մասն են, որոնք կարևոր դեր են խաղում երեխայի համակողմանի զարգացման գործում: Երաժշտությունն ունի անհատականության վրա ազդելու զարմանալի ուժ, այն հզոր գործիք է երեխայի գեղագիտական ընկալումը զարգացնելու համար: Երեխայի համար երաժշտության ընդունումն ու ընկալումը աշխարհը զգալու և հասկանալու միջոց է, որը նպաստում է դրական կյանքի փորձի ձևավորմանը: Երաժշտությունը երեխային սովորեցնում է արտահայտել հույզերն ու զգացմունքները, օգնում է նրան հասկանալ և զգալ ինչպես ուրախությունը, այնպես էլ վիշտը, տխրությունը: Երաժշտական ստեղծագործությունները՝ լցված խորը մտքերով ու զգացմունքներով, դառնում են դաստիարակության հզոր աղբյուր:

Յուրաքանչյուր մարդ յուրահատուկ է երաժշտության հանդեպ իր ընկալմամբ և վերաբերմունքով: Վ. Ա. Մուխոմիլինսկին երաժշտությունը համարել է զարմանալի և հզոր գործիք նաև ինքնակրթության համար, որն օգնում է բացահայտել մարդկային լավագույն որակները:

Երաժշտությունը զարգացնում է երեխայի հուզական ոլորտը, օգնում է նրան ավելի լավ հասկանալ շրջապատող աշխարհը, մարդկանց և նրանց միջև փոխհարաբերությունները: Երաժշտությունը նպաստում է ինքնաճանաչմանը և օգնում երեխաներին սովորել հասկանալ իրենց սեփական և ուրիշների հույզերն ու զգացմունքները:

Երաժշտական կրթությունը կարևոր է ոչ միայն երաժշտական ունակությունների զարգացման, այլև երեխաների ընդհանուր կրթության համար՝ խթանելով նրանց զգացմունքներն ու սպորտները: Երաժշտության ունկնդրումը հարստացնում է երեխայի ներաշխարհը և օգնում նրան ավելի լավ ընկալել իրեն շրջապատող աշխարհը: Երաժշտական կրթության կարևոր տարր է նաև երգեցողությունը: Երեխաները երգելու ընթացքում հարստացնում են իրենց հոգիները, զարգացնում են ներդաշնակության զգացումը և երաժշտական ճաշակը: Ռիթմիկան և երաժշտական գործիքներ նվագելը օգնում են զարգացնել երաժշտական և ճանաչողական կարողությունները, ինչպես նաև նպաստում են անկախության, ուշադրության և կազմակերպ-

վածության ձևավորմանը: Մեծ է նաև ինքնուրույն ստեղծագործելու (իմպրովիզացիա) դերը երաժշտության ուսուցման գործընթացում, քանի որ այսօր շատ կարևոր է ստեղծագործ անձի ձևավորումը մեր հասարակության մեջ:

Երաժշտական գործունեությունը, իր հուզականության շնորհիվ, գրավիչ է երեխայի համար: Երաժշտության ընկալման մեջ հիմնական դերը պատկանում է զգացմունքներին, որը առաջացնում է հոգևոր բավարարվածություն կամ դժգոհություն: Շատ կարևոր է ուսուցչի ներգործությունն այս գործընթացում, քանի որ միայն նպատակաուղղված մանկավարժական գործունեության ազդեցությունը կարող է երեխաներին ընդգրկել տարբեր տեսակի գեղարվեստական ստեղծագործական գործունեության մեջ և նպաստել նրանց զգացմունքների զարգացմանը, ապահովել գեղագիտական երևույթների խոր ընկալումն ու գնահատումը: Մեծն Կոմիտասը, իր «Պարն ու մանուկը» հողվածում, մեծ նշանակություն է տալիս ուսուցչի դերին այս գործում. «Մանուկը բարոյական կյանքի փոխտափայտությունը, կյանքի հասկացողությունը չունի: Պետք է սևոր հոգեկան զգացումներուն հավասարակշիռ դաստիարակություն մը տալ: Հորպեսզի յերգեցողությունը ղնդերներու միջոցով սևոր ուղեղին բարեբար ազդեցություն մը ունենա, պետք է գիտակցված ըլլա: Յերգը կը սովորին իբրև հանույքի առարկա, և յերբ կը մեծնան, փորելի ազդեցություն չեն կրեր անկե՛ դարձյալ նույն ակնարկով: Դաստարկ հնչումեն դաստարկ զգացում կառաջանա: Զգացումները կանոնավորելու, ուղեղու, զարգացնելու համար հարկ է յերգեցողության ավանդումին նպատակահարմար ուղղություն մը տալ» [2, էջեր 65-66]: Այսինքն հարկավոր է ամենայն խորությամբ ուշադրություն դարձնել այն ստեղծագործություններին, որոնք տրվում են երեխաներին որպես կատարման կամ ունկնդրման նյութ: Դրանք պետք է լինեն խորիմաստ, բովանդակային, համապատասխան սովորողների տարիքային առանձնահատկություններին, հակառակ դեպքում դրանք աշակերտին ոչ մի հոգևոր բավարարվածություն տալ չեն կարող: Շատ կարևոր է, որ ուսուցիչները դասին նախապատրաստվելիս նկատի ունենան ոչ միայն գիտելիքներ հաղորդելը, այլև գեղագիտական հույզերի և զգացմունքների դաստիարակումը:

Երաժշտությունը առանցքային դեր է խաղում երեխաների դաստիարակության գործում՝ եզակի հնարավորություն ընձեռելով հասկանալու աշխարհն իր ողջ բազմազանությամբ և խորությամբ: Այն նպաստում է երեխայի ստեղծագործական, երաժշտական ընկալման և երևակայության զարգացմանը: Երեխաները կյանքի առաջին իսկ օրերից սկսում են ծանոթանալ երաժշտությանը, իսկ համակարգված

երաժշտական կրթությունը սկսվում է մանկապարտեզից և շարունակվում դպրոցական տարիներին:

Երաժշտությունը սովորեցնում է ոչ միայն ընկալել, այլև վերարտադրել, որն օգնում է զարգացնել ընկալման և հիշողության տարբեր տեսակներ՝ տեսողական, լսողական, շարժիչ և ասոցիատիվ: Դրա ազդեցությունը դպրոցականների անհատական զարգացման վրա դրսևորվում է նրանց աշխարհայացքի, բարոյական համոզմունքների և հուզական ոլորտի ձևավորման մեջ: Երաժշտությունը միավորում է մարդկանց՝ անկախ նրանց նմանություններից և տարբերություններից: Այն դառնում է միջոց, որի միջոցով մարդիկ կարող են փոխանակել, արտահայտել իրենց զգացմունքներն ու հույզերը:

Երաժշտական կրթությունն պետք է երեխաներին կողմնորոշի երաժշտական բազմազանության մեջ՝ տարբերելու իրական արվեստը միջակ արվեստից և գնահատելու այն: Արդի շրջանում սա համարում ենք մեծ խնդիր, քանի որ եվրոպական մշակույթից պատճենումն ու կիրառումը որպես ազգային, մեծ խնդիր է առաջացրել սերնդի համար, որոնք այսօր դժվարությամբ են կարողանում տարբերակել իրական և գեղեցիկ արվեստը: Այսօր երաժշտությունը մեծապես կիրառվում է որպես ժամանցն անցկացնելու միջոց, որը արմատավորվում է երեխայի մոտ, ինչը, բնականաբար, թողնում է բացասական ազդեցություն արվեստը ընկալելու և գնահատելու գործում: Այսօր յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իր առջև խնդիր դնի փոխելու երեխաների գեղագիտական ճաշակը, արվեստն ընկալելու և գնահատելու կարողություններ ձևավորի նրանց մեջ:

Երաժշտությունը ձևավորում է մտածողությունը և զարգացնում ստեղծագործական կարողությունները՝ օգնելով սովորողներին մտածել ավելի ազատ և ճկուն: Արդյունավետ ուսուցման համար կարևոր է ուշադրություն դարձնել երաժշտության նկատմամբ երեխաների հուզական և գեղագիտական վերաբերմունքի զարգացմանը, ինչը նպաստում է արվեստի գործերի ավելի խորը ընկալմանը:

Երաժշտություն սովորելը երեխաներին թույլ է տալիս ոչ միայն զգալ երաժշտական ստեղծագործությունը, այլև արտահայտել իրենց զգացմունքները երաժշտության միջոցով: Այն հզոր միջոց է, որի միջոցով երեխաները կարող են ճանաչել իրենց զգացմունքները և սովորել դրանք արտահայտել ինտոնացիայի, ռիթմի, երգեցողության և շարժումների միջոցով: Երաժշտության ուսումնասիրության ընթացքում սովորողները սկսում են հասկանալ երաժշտական ստեղծագործության տարբեր տարրերը, ինչպիսիք են մեղեդին, ռիթմը, տեմպը, հնչերանգը, որոնք նպաստում են երաժշտության գեղա-

գիտական գնահատմանը և ընկալմանը որպես արվեստ: Բացի այդ, երաժշտությունն օգնում է զարգացնել գեղագիտական ընկալման կարողությունը ոչ միայն արվեստում, այլև կյանքում, դառնալով նրանց մշտական ուղեկիցը:

Երաժշտական կրթությունը լայն իմաստով ներառում է հոգևոր և բարոյական արժեքների զարգացումը, բանականությունը և հուզական ընկալումը: Ավելի նեղ համատեքստում այն ուղղված է երաժշտությունն ընկալելու ունակության զարգացմանը և երաժշտական մշակույթի ձևավորմանը, որը ներառում է երաժշտական կարողությունների և հմտությունների, ստեղծագործականության զարգացումը: Շատ կարևոր է, որ մեր դպրոցներում արվեստի առարկաների ուսուցանումը դիտարկվի ոչ միայն որոշակի կատարողական կարողությունների և հմտությունների ձևավորման միջոց, այլև պարունակի իր մեջ զգացմունքային տարրեր, զարգացնի սովորողների հուզազգացմունքային աշխարհը և հարստացնի այն:

Երաժշտությունը զգալի ազդեցություն ունի սովորողների հուզական ընկալման վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ երաժշտության միջոցով սովորողները կարող են զգալ զգացմունքների լայն շրջանակ՝ ուրախությունից և հուզմունքից մինչև տխրություն և ողբերգություն: Երաժշտության հետ այս փոխազդեցությունը նպաստում է անհատի հուզական ոլորտի զարգացմանը, ուժեղացնում է ինքնադրսևորվելու, ինքնաճանաչման և կարեկցանքի կարողությունը: Այս փորձառությունն օգնում է սովորողներին ոչ միայն ավելի լավ հասկանալ իրենց հույզերը, այլև սովորել կարգավորել դրանք: Այս գործընթացում առանձնահատուկ դեր է խաղում երաժշտության ընկալումը նրա մշակութային նշանակության համատեքստում: Տարբեր դարաշրջանների և ազգերի երաժշտական ստեղծագործությունների հետ ծանոթանալը սովորողներին օգնում է ոչ միայն զարգացնել իրենց գեղագիտական նախասիրությունները, այլև ընդլայնել իրենց մտահորիզոնը և ավելի լավ հասկանալ այլ մշակույթները և նրանց գեղարվեստական ավանդույթները:

Ինչպես գիտենք, ուսումնական գործընթացում երաժշտության հիմնական գործառնություններից մեկը սովորողների ստեղծագործական ներուժի խթանումն է: Երաժշտության ստեղծման գործընթացը, լինի դա կատարման, իմպրովիզացիայի կամ կոմպոզիցիայի միջոցով, նպաստում է ստեղծագործական երևակայության զարգացմանը, ինչը հատկապես կարևոր է նրանց ինքնուրույն աշխատանքի և քննադատական մտածողության զարգացման համար: Իսկ այսօրվա մեր հասարակության մեջ զարգացող և ձևավորվող անհատների համար խիստ

անհրաժեշտ ենք համարում քննադատական մտածողության ձևակերպումը: Քանի որ ներկայիս մշակութային բազմազանության մեջ երեխան պետք է սովորի կողմնորոշվել, տարբերի իրականն ու արժեքավորը:

Երաժշտության ուսուցման գործընթացում ստեղծագործական գործունեությունը թույլ է տալիս սովորողներին ոչ միայն արտահայտել իրենց զգացմունքները, այլև զարգացնել երաժշտական կառույցների ավելի խորը պատկերացում, ինչը նպաստում է նրանց գեղագիտական հասունության զարգացմանը: Կարևոր է նշել, որ երաժշտական հմտությունների զարգացումը նաև օգնում է բարելավել սովորողների ընդհանուր ճանաչողական գործունեությունը, զարգացնել ուշադրությունը, հիշողությունը և երևակայությունը:

Երաժշտությունը ոչ միայն զգացմունքային, այլև զգալի ճանաչողական ազդեցություն ունի սովորողների վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ երաժշտական գործունեությունը կարող է բարելավել մի շարք ճանաչողական հմտություններ, ինչպիսիք են ուշադրությունը, հիշողությունը, ընկալումը և խնդիրներ լուծելու կարողությունները: Երաժշտություն լսելը ակտիվացնում է ուղեղի տարբեր հատվածներ, այդ թվում՝ հիշողության, ուշադրության, շարժողական ֆունկցիաների և լեզվի ընկալման համար պատասխանատու հատվածները: Երաժշտական գործունեությունը նաև օգնում է սովորողներին զարգացնել բազմաֆունկցիոնալ հմտություններ, քանի որ երաժշտություն կատարելիս կարևոր է միաժամանակ վերահսկել տարբեր տարբեր՝ ռիթմ, տեմպ, դինամիկա, ինտոնացիա: Երաժշտություն լսելով սովորողները սկսում են ավելի լավ տարբերակել ձայնի երանգները, ռիթմիկ կառուցվածքները և մեղեդիական գծերը, ինչը օգնում է զարգացնել ուշադրությունը և բարձրացնել տեղեկատվությունը վերլուծելու և սինթեզելու կարողությունը: Երաժշտությունը ունակ է ապահովելու նաև սովորողների բարոյական դաստիարակությունը: Չէ՞ որ տարբեր հայրենասիրական երգերի և ստեղծագործությունների կատարումն ու ունկնդրումը նրանց մեջ առաջացնում են բարոյական զգացմունքներ: Այստեղից էլ կարող ենք ասել, որ երաժշտությունը օգնում է զարգացնել սովորողների գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ զգացմունքները միաժամանակ:

Դպրոցականների երաժշտության գեղագիտական ընկալումը զարգանում է երաժշտական գործունեության տարբեր ձևերի միջոցով՝ երաժշտական ստեղծագործությունների ունկնդրումից մինչև երաժշտության ստեղծման ակտիվ ներգրավվածություն, լինի երաժշտական գործիքներ նվագելու կամ վոկալ կատարումների միջոցով: Այս համատեքստում կարևոր գործոն է

երաժշտությունը ոչ միայն որպես ժամանցի միջոց, այլև որպես ստեղծագործական ձգտումների, մշակութի և փիլիսոփայության արտահայտություն ընկալելու սովորողների կարողությունը: Ի դեպ, կարևոր է նշել, որ երաժշտությունն իր ակտիվ ներգործությունը կթողնի սովորողների վրա միայն նրանց ակտիվ մասնակցության և ներգրավվածության միջոցով: Քանի որ միայն այդ դեպքում երաժշտությունը կթողնի նրանց վրա իր ազդեցությունը, առաջացնելով տարբեր հույզեր և ապրումներ: Առանցքային կետը երեխաների կարողությունն է հասկանալու երաժշտական ստեղծագործությունների կառուցվածքը՝ դրանց ռիթմը, ներդաշնակությունը, տեմպը, մեղեդին և դինամիկան: Այս տարրերի ըմբռնումը զարգացնում է երաժշտականականը և գեղագիտական ընկալումը: Իսկ երաժշտության գեղագիտական ընկալումն անհնար է առանց ստեղծագործության քննադատական ընկալման, նրա իմաստային խորության և գեղեցկության գիտակցման:

Երաժշտությունը զարգացնում է երեխաների ստեղծագործ մտածելու կարողությունը և օգնում է նրանց տեսնել և զգալ ներդաշնակությունը աշխարհում: Մինևույն ժամանակ, երաժշտական համատեքստում գեղագիտական զգացումների զարգացումը չի սահմանափակվում միայն երաժշտական ստեղծագործությունների տեսական գիտելիքներով, այլ, ինչպես վերը նշեցինք, ներառում է ակտիվ գործունեություն, ինչպիսիք են երաժշտության ստեղծումը, երաժշտական ստեղծագործությունների վերլուծությունը, երաժշտական խաղերին մասնակցելը և իմպրովիզացիաները:

Երաժշտության միջոցով ձևավորված գեղագիտական գիտակցությունը նպաստում է սովորողների այնպիսի որակների զարգացմանը, ինչպիսիք են ուշադրությունը մանրուքներին, արվեստի գործերն ամբողջությամբ ընկալելու կարողությունը, տարբեր գեղարվեստական տարբեր գնահատելու և մեկնաբանելու կարողությունը: Սա ազդում է երեխայի ընդհանուր մշակութային իրազեկման, ինքնաճանաչման և շրջապատող աշխարհը քննադատաբար ընկալելու կարողության վրա:

Աշակերտների մոտ գեղագիտական զգացմունքներն արդյունավետ զարգացնելու համար կարևոր է կիրառել մանկավարժական տարբեր մեթոդներ, որոնք երեխաներին կներգրավեն ակտիվ երաժշտական ընկալման և ստեղծագործական գործունեության մեջ: Կարևոր է օգտագործել երաժշտության ինտերման տեխնիկան այլ արվեստների հետ, ինչպիսիք են նկարչությունը, գրականությունը և թատրոնը: Սա տարածք է ստեղծում միջդիսցիպլինար մոտեցման համար և զարգացնում է ուսանողների կարողությունը՝ ընկալելու արվեստն իր

բազմազանությամբ և փոխկապակցվածությամբ: Մակայն հարկ է նշել, որ ուսուցման գործընթացում կարևոր է ոչ միայն արվեստի առարկաների փոխկապակցվածությունը, այլև ուսումնական բոլոր առարկաների կապը միմյանց հետ, քանի որ բոլոր առարկաները պարունակում են գեղագիտական տարրեր, որոնք անհրաժեշտ է գտնել և աշխատանք տանել այդ ուղղությամբ: Ինչպես նշել է Ռ. Աթայանն իր «Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը» գրքում, կրթական աշխատանքի ամբողջական ներգործությունը միայն կտա ներդաշնակ, բազմակողմանիորեն զարգացած անհատականություններ: Այս առումով կենսական անհրաժեշտություն է համարում դասավանդող ուսուցիչների համագործակցությունը, նրանց ջանքերի համաձայնեցումը [1, էջ 180]:

Երաժշտության ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել տարբեր երաժշտական ստեղծագործությունների ունկնդրմանը: Երաժշտության յուրաքանչյուր ժանր և ոճ ունի յուրահատուկ գեղագիտական առանձնահատկություններ, որոնք կարող են ազդել սովորողների հուզական և ինտելեկտուալ ընկալումների վրա: Օրինակ, դասական երաժշտությունը նպաստում է ներդաշնակության և կոմպոզիցիայի զգացողության զարգացմանը, իսկ ժողովրդական մեղեդիները նպաստում են տարբեր ժողովուրդների մշակույթի և ավանդույթների ընկալմանը:

Ուսումնական գործընթացում կարևոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք նպաստում են երաժշտության ակտիվ ընկալմանը և սովորողների ներգրավվածությանը տարբեր տեսակի երաժշտական գործունեության մեջ: Օրինակ, դպրոցական երգչախմբերը, նվագախմբերը և անսամբլները հնարավորություն են տալիս նրանց ոչ միայն սովորել գեղեցիկ կատարման տեխնիկան, այլև զգալ համատեղ ստեղծագործության գեղագիտական փորձը: Սա նպաստում է միասին տարբեր զգացմունքներ ապրելու կարողությանը, որի օգնությամբ սովորողները ծանոթանում են մեկը մյուսի հուզական ոլորտին, որն էլ նրանց միջև ավելի ամուր հուզական կապեր է արթնացնում:

Երաժշտության դասավանդման գործընթացում սովորողների գեղագիտական զգացմունքները զարգացնելու համար մեր կողմից առաջարկվեցին մի շարք միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն «Երաժշտություն» առարկան դասավանդող ուսուցիչներին:

Առաջարկում ենք դասի ընթացքում կիրառել նաև տարբեր երաժշտական խաղեր, որոնք զարգացնում են երեխաների ոչ միայն երաժշտական և կատարողական հմտությունները, այլ նաև հուզական և ճանաչողական կարո-

ղությունները, զարգացնում են նրանց ստեղծագործ մտածողությունը և երևակայությունը:

1. Խաղ «Զգացմունքների երաժշտության մեջ»

Այս խաղում սովորողները լսում են հատվածներ տարբեր երաժշտական ստեղծագործություններից (օրինակ՝ դասական երաժշտություն, տարբեր դարաշրջանների կամ ժանրերի երաժշտություն) և փորձում են գուշակել կամ բառերով արտահայտել, թե ինչ զգացմունքներ է առաջացնում ստեղծագործությունը (ուրախություն, տխրություն, բերկրանք, անհանգստություն և այլն): Սա զարգացնում է երաժշտությունը զգացմունքային մակարդակով ընկալելու ունակությունը:

2. Խաղ «Երաժշտական հանելուկներ»

Ուսուցիչը նվագում կամ վերարտադրում է որոշակի երաժշտական դրվագներ (մեղեդիներ, ռիթմեր, ակորդներ) և ուսանողներին տալիս հարցեր՝ կապված այն բանի հետ, թե ինչ գործիքներ կարող են նվագել այս երաժշտությունը, ինչ հույզեր կարող են արտահայտվել այս հատվածի միջոցով: Սա խթանում է տարբեր երաժշտական տարրերի ընկալումը և ձևավորում ոճի զգացողությունը:

3. Խաղ «Գտիր ռիթմը»

Դասարանը բաժանվում է մի քանի խմբի: Ուսուցիչը կամ աշակերտներից մեկը գործիքի վրա կամ ձայնով մի պարզ ռիթմիկ հաջորդականություն է արտաբերում, իսկ խմբերը պետք է այն ճշգրիտ կրկնեն: Այս խաղը զարգացնում է ռիթմի զգացում և մանրունքների նկատմամբ ուշադրություն, ինչպես նաև հուզական կապ խմբերում առկա սովորողների միջև:

4. Խաղ «Երաժշտությունն ու աշխարհը»

Այս խաղում սովորողները լսում են երաժշտական հատվածներ և առաջարկում ասոցիացիաներ՝ բնության, իրադարձությունների, մարդկանց, նկարների հետ: Սա նպաստում է երևակայության զարգացմանը, երաժշտությունը այլ արվեստներ փոխանցելու և երաժշտությանը հուզական արձագանքներ ձևավորելու կարողությանը:

5. Խաղ «Իմպրովիզացիա»

Սովորողները կարող են հանպատրաստից ստեղծագործել իրենց ընտրած գործիքների վրա կամ ձայնի միջոցով՝ հիմնվելով առաջարկվող թեմայի կամ տրամադրության վրա: Օրինակ՝ կարող ենք առաջարկել «Ամառային անձրև» կամ «Ճանապարհորդություն դեպի անտառ» թեման: Այն զարգացնում է ստեղծագործական մտածողությունը և երաժշտության միջոցով անձնական զգացմունքներն արտահայտելու կարողությունը:

6. Խաղ «Երաժշտական տրամադրություն»

Այս խաղի ընթացքում սովորողների համար ուսուցիչը կատարում է փոքրիկ մեղեդի՝ ուրախ կամ տխուր բնույթով և չի ավարտում այն:

Սովորողներին հանձնարարվում է մտածել մեղեդու շարունակությունը և ավարտել այն հակառակ տրամադրությամբ՝ ուրախը տխուր, տխուրը ուրախ:

7. Խաղ «Երաժշտական ճանփորդություններ»

Ուսուցիչը նվագում է աշխարհի տարբեր ծայրերից տարբեր երաժշտական ստեղծագործություններ աշակերտները պետք է գուշակեն, թե որ երկրի կամ տարածաշրջանի երաժշտական լեզվին է բնորոշ և ինչ զգացմունքներ է արթնացնում: Այս խաղը զարգացնում է տարբեր մշակույթների երաժշտական ավանդույթների ընկալումը, օգնում է ընդլայնել երաժշտության ըմբռնումը, ինչպես նաև սեփական զգացմունքները արտահայտելու կարողությունը:

8. Խաղ «Երաժշտական պատկերներ»

Ուսուցիչը ցույց է տալիս պատկերներ հայտնի ֆիլմերից և աշակերտները պետք է ընտրեն համապատասխան երաժշտական թեմա կամ մոտիվ, որն իրենց կարծիքով արտացոլում է տվյալ նկարի մթնոլորտը: Սա խթանում է երաժշտության և վիզուալ արվեստի միջև կապի զգացումը և օգնում է զարգացնել ստեղծագործ մտածողությունը:

9. Խաղ «Երաժշտական հսկադրություններ»

Սովորողները լսում են երկու տարբեր երաժշտական ստեղծագործություններ (օրինակ՝ արագ և դանդաղ, կամ ուրախ և տխուր) և հետո քննարկում են, թե ինչպես են ստեղծագործությունները տարբերվում տեմպով, ռիթմով, դինամիկայով և մեղեդիով և, թե դրանցից որոնք են համապատասխանում իրենց տրամադրությանը: Կարող ենք հանձնարարել նրանց պատկերել այս հսկադրությունները նաև շարժումների կամ դիմախաղի միջոցով: Այս վարժությունը զարգացնում է ուշադրություն երաժշտության տարբեր տարբերելու համար, ինչպես նաև կօգնի ուսուցչին հասկանալ աշակերտների հուզական վիճակը և տրամադրությունը:

10. Խաղ «Երաժշտական պատմություն»

Ուսուցիչը կամ սովորողները կարող են պատմել մի պատմություն և ընտրել կամ ստեղծել երաժշտություն, որը, իրենց կարծիքով, կուղեկցի պատմությանը: Սա զարգացնում է երաժշտական իմպրովիզացիայի հմտությունները և օգնում աշակերտներին հասկանալ, թե ինչպես երաժշտությունը կարող է արտահայտել տարբեր զգացմունքներ:

11. Խաղ «Գաղտնի կոմպոզիտոր»

Մեկ աշակերտ կամ ուսուցիչ նվագում կամ երգում է ստեղծագործության մի փոքրիկ հատված, իսկ մյուսները պետք է գուշակեն կոմպոզիտորին, դարաշրջանը կամ ոճը, փորձելով արտահայտել ստեղծագործության տրամադրությունը: Սա զարգացնում է երաժշտության ոճերն ու դարաշրջանները տարբերելու ունակությունը և օգնում է պարզել, թե ինչ զգացմունքներ է

ունեցել կոմպոզիտորը տվյալ ստեղծագործությունը ստեղծելիս:

12. Խաղ «Երաժշտություն և գույներ»

Սովորողները լսում են տարբեր երաժշտական ստեղծագործություններ և պետք է ընտրեն կամ նկարեն այնպիսի գույն, որը, իրենց կարծիքով, համապատասխանում է երաժշտությանը: Օրինակ, պայծառ ու հարուստ ձայնը կարող է կապված լինել կարմիր կամ նարնջագույն գույնի հետ, մինչդեռ թախճոտ հնչյունները կարող են կապված լինել ավելի հանգիստ և նուրբ գույների հետ: Սա երաժշտության և տեսողական ընկալման միջև կապի զգացում է զարգացնում:

13. Խաղ «Չայնի թատրոն»

Աշակերտներին հանձնարարվում է կարճ դրվագ բեմականացնել միայն երաժշտության և հնչյունների միջոցով: Օրինակ՝ անձրևի կաթիլներ, անտառ, երեկոյան զրոսանք: Նրանք կարող են օգտագործել տարբեր երաժշտական գործիքներ կամ իրենց ձայնը՝ տարբեր հնչյուններ արտաբերելու համար: Այս խաղը զարգացնում է ստեղծագործական ունակությունները և երաժշտության միջոցով մթնոլորտ ստեղծելու և տարբեր զգացմունքներ փոխանցելու կարողությունը:

Այս խաղերը կարող են հարմարեցվել՝ կախված սովորողների տարիքից, երաժշտական պատրաստվածությունից և դասի առանձնահատկություններից: Դրանք բոլորն էլ նպաստում են գեղագիտական ընկալման և գեղագիտական զգացմունքների ձևավորման, լսողության, ստեղծագործական մտածողության, երաժշտության նկատմամբ հետաքրքրության զարգացմանը և օգնում են արտահայտել սեփական զգացմունքները:

Եզրակացություն

Այսպիսով, երաժշտության ազդեցությունը սովորողների գեղագիտական զգացմունքների ձևավորման վրա կրթական գործընթացի կարևոր կողմն է: Երաժշտությունը ստեղծում է հրաշալի պայմաններ երեխաների զգացմունքների և հուզական աշխարհի ձևավորման և հարստացման համար: Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելիս կարևորի ոչ միայն սովորողների կատարողական հնարավորությունները, այլև առաջին պլան մղի զգացմունքների ձևավորման խնդիրը ուսուցման գործընթացում: Այսօր մեր դպրոցներում սովորողների զգացմունքները ոչ միայն երկրորդ պլան են մղված, այլ շատ դեպքերում նույնիսկ հաշվի չեն առնվում, թե ինչ զգացմունքներ առաջացավ երեխայի մոտ տվյալ երաժշտությունը ունկնդրելիս կամ կատարելիս: Արդյո՞ք նա հոգևոր բավարարվածություն ստացավ տվյալ ստեղծագործությունից և լցրեց նրա ներաշխարհը գեղեցիկի տարրերով:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աթայան Ռ.** «Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը»: – Եր.: Լույս հրատ., 1974. – 203 էջ:
2. **Կոմիտաս** Հոգևածներ յեվ ուսումնասիրություններ: Հավաքեց Ռ. Թերլեմեյանը: – Յերևան, Պետական հրատարակչություն, 1941: – 199 էջ:
3. **Հակոբյան Ն. Հ.** Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը դպրոցում: Եր. Հովհաննես Թումանյանի անվան դպր. մանկավարժ. կոլեկտիվի աշխատանքի փորձից: – Եր.: Լույս, 1987. – 144 էջ:
4. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար / Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան և այլք. – Եր.: Տիգրան Մեծ, 2009. – 240+8 էջ ներդիր:
5. **Մելքումյան Մ. Ս.** Դպրոցականների գեղագիտական զգացմունքների դաստիարակությունը: – Երևան Լույս հրատարակչություն, 1967:
6. **Ներսիսյան Լ. Ս.** Կրթություն և գեղագիտություն: – Եր.: Չանգակ-97, 2002. – 158 էջ:
7. **Александровна И. И.** Влияние музыки на музыкально-эстетическое воспитание детей старшего дошкольного возраста. учебно-методический материал. 2020 <https://nsportal.ru/detskiy-sad/raznoe/2020/01/19/vliyanie-muzyki-na-muzykalno-esteticheskoe-vozpitanie-detey-starshego>
8. **Борецкая О. Д.** Роль музыки в эстетическом воспитании учащихся. // Международный научный журнал «ВЕСТНИК НАУКИ» № 12 (57) Т.4. 2022 <https://cyberleninka.ru/article/n/rol-muzyki-v-esteticheskom-vozpitanii-uchaschihsya-1>
9. **Кривицкий К. Е.** Школьникам об эстетике: Кн. для учащихся ст. классов. – 2-е изд., доп. и перераб. – М.: Просвещение, 1979. – 153 с.
10. **Теплов Б. М.** Избранные труды: В 2-х т. Т. I. – М.: Педагогика, 1985.-328 с., ил. (Труды д. чл. и чл.-кор. АПН СССР). В подзаг.: АПН СССР.
11. Analysis and research on the influence of music on students' mental health under the background of deep learning. 2022 <https://www.frontiersin.org/journals/psychology/articles/10.3389/fpsyg.2022.998451/full>

Տճանա/Հանձնվել է՝ 05.03.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 12.03.2025

Принята/Ընդունվել է՝ 19.03.2025